ՀՏԴ 37.02:741

Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (կերպարվեստ)

Մարինե ՂԱԼԱՅԱՆՑ
ԱրՊՀ կերպարվեստի ամբիոնի ավագ դասախոս, հայցորդ

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆ

Հոդվածը գտնում է , որ ինտեգրված ուսուցումը, ներառականությունը կրթության, մշակույթի ու արվեստի հիմքն են Դպրոցական ուսումնասիրվող ցանկացած առարկա ներառական ուսուցման դեպքում կարող է վերածվել զարգացող համակարգի: Ուսուցման արդյունավետության բարձրացման, կառավարման, ծրագրավորման համար կարևոր է ուսումնական գործընթացի արդյունավետության որոշարկող գործոնների աստիճանակարգի հարցը: Եվ որպես ուսուցման գործընթացի գլխավոր գործոն՝ առանձնացվում են հիմնավորումը, ուսման նկատմամբ հետաքրքրությունը, պահանջմունքները և այլն: Հենց այդ պատճառով մանկավարժությունը պետք է անվերապահորեն հաշվի նստի այդ կանխադրույթի հետ և ձգտի խթանելու երեխայի միտքը, զարգացնի նրա դիտողականությունը, մտածողությունն ու ստեղծագործական երևակայությունը:

Նշված գործոնները առավել բնութագրական են ինտեգրված ուսուցման գործընթացի համար,որը համարվում է մանկավարժական տեխնոլոգիա: Այն ներառում է ուսուցման աստիճանակարգային բոլոր գործոնները, ինչպիսիք են՝ուսուցման նպատակը, բովանդակությունը, ձևերն ու միջոցները:

Ստեղծագործության կերտման գործընթացում կարևոր դեր են խաղում երևակայությունն ու պատկերավոր մտածողությունը, որոնք հենվում են ստեղծագործական արտահայտչամիջոցների, մշակութային ժառանգության, հուզագեղագիտական զարգացման մշակույթի, պատմական փորձի, մշակութային հիշողության, ուշադրության և այլ գործոնների վրա: Արվեստի տարբեր ձևերի համադրումը հիմնվում է որոշակի քանակական գնահատականների վրա,

որոնք ընդհանուր են գեղագիտական փորձի բոլոր տեսակների համար:
Բանալի բառեր՝ հանրակրթություն, զարգացում, դաստիարակություն, միջառարկայական կապ, գրականություն, երաժշտություն, ստեղծագործություն, երևակայություն:

М. Галаянц

ИНТЕГРИРОВАННОЕ ОБУЧЕНИЕ КАК ПЕДАГОГИЧЕСКОЕ УСЛОВИЕ ХУДОЖЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

В статье освещается положение о необходимости интегрированного обучения в педагогике, которое в основном опирается на междисциплинарные связи и формы коммуникации. Интегрированное обучение в школе предполагает связь различных форм художественного творчества - литературы, изобразительного искусства, музыки, что и стимулирует развитие творческого воображения школьника. Сравнительный жизненный опыт, знания, способности в случае интегрированного обучения обучаемым предметам совместно способствуют развитию интересов и креативного мышления учащихся. С этой целью педагогика должна безоговорочно считаться с указанным постулатом и стремиться, чтобы школа стимулировала мысль ребенка, развивала его наблюдательность, склонность к размышлению и выражению, использовала способности, предпочтения и опыт ребенка. Таким образом, различные школьные предметы, в частности литература, музыка, современные технологии, дизайн, интегрированные с изобразительным искусством, имеют необходимую цель развивать эстетический вкус школьника, мировоззрение, чувства и психические явления, которые способствуют духовному развитию человека.
Ключевые слова: общее образование, развитие, воспитание, междисциплинарная связь, литература, музыка, творчество, воображение.

M. Ghalayants

INTEGRATED LEARNING AS A PEDAGOGICAL CONDITION OF ARTISTIC ACTIVITY

The article highlights the position on the need for integrated education in pedagogy, which is mainly based on interdisciplinary connections and forms of communication. Integrated education at school involves the connection of various forms of artistic creativity - literature, fine arts, music, which stimulates the development of a student's creative imagination. Comparative life experience, knowledge, and abilities in the case of integrated teaching of the subjects taught jointly contribute to the development of students' interests and creative thinking. To this end, pedagogy should unconditionally take into account this postulate and strive for the school to stimulate the child's thought, develop his

observation, tendency to reflection and expression, use the child's abilities, preferences and experience.
Thus, various school subjects, in particular literature, music, modern technology, design, integrated with the visual arts, have the necessary goal to develop the aesthetic taste of the student, worldview, feelings and mental phenomena that contribute to the spiritual development of a person.
Key words: general education, development, upbringing, interdisciplinary communication, literature, music, creativity, imagination.

Ինտեգրված ուսուցումը մանկավարժության մեջ հիմնականում հենվում է միջառարկայական կապերի և հաղորդակցման ձևերի, կապի, տեղեկատվության վրա: Գեղարվեստական մանկավարժության բնագավառում ինտեգրված ուսուցումը ենթադրում է գեղարվեստական ստեղծագործության տարբեր ձևերի կապը հասարակական մշակույթի և նրա ընդհանուր զարգացման, մարդկության պատմության և համամարդկային արժեքների հետ: Հետևաբար ներառականությունը իր իսկ բաղկացուցիչների հսկայական քանակության տարբերակված փոխներգործության օրինաչափ համակարգ է՝ երևակայության, մտածողության և գիտակցության միաժամանակյա աշխատանքի մակարդակում: Այս առնչությամբ կարելի է ասել նաև, որ ներառականությունը կրթության, մշակույթի ու արվեստի հիմքն է: Հենվելով նշվածի վրա՝ կարող ենք հաստատել նաև, որ դպրոցական խրագրի յուրաքանչյուր դասընթաց ներառական ուսուցման դեպքում կարող է վերածվել զարգացող համակարգի:

Գիտության ոլորտում **ներառականություն** բառեզրը կիրառվում է գիտությունների փոխադարձ կապի և դրանց տարբերակման գործընթացում:

Ներառականության խնդրի հիմնավոր և տեխնոլոգիական իմացություններին նվիրված մի շարք հետազոտություններում որոշարկված են ներառականության հիմնական դիալեկտիկական կապերը և փուլանցումը (մարդկային հասարակության դիտարկումը տիեզերական դիրքերից): Կ.Պ.Կրասնոյարովի կարծիքով՝ «Գիտության միաձուլումը գործնականի հետ և դրանից բխող գիտական գործունեության օբյեկտների և բնույթի փոփոխությունները հանգեցնում են ներառական գործընթացների կենսունակ զարգացմանը և աշխատանքային նոր ձևերի որոնման, գործունեության բովանդակության համալիր հետազոտությունների անցկացման, առավել ճկուն և շարժունակ հետազոտական խմբերի մշակման և, իհարկե, ցանկացած գործունեության կառավարման համակարգի կատարելագործման անհրաժեշտության ստեղծման» (3,26) :

Գիտական հետազոտությունների բնագավառում ներառականության խնդրին համալիր մոտեցումը մանրակրկիտ մշակվել է Ա.Ա.Բալյանի, Լ.Ս.Ներսիսյանի, Վ.Գ.Աֆանասևի, Կ.Պ.Կրասնոյարովի աշխատություններում:

Մեր կարծիքով նման համալիր հետազոտությունները թույլ են տալիս բազմակողմանի ներգործության ենթարկել ներառականության ուղղություններն ու ձևերը: Իսկ ներառականության բնույթը ցանկացած հետազոտության կառույցում անուղղակի ներգործություն է թողնում աշխարհայացքի վրա: Գիտության և հասարակության մեջ ժամանակակից համալիր ուղղությունների պայմանավորվածությունն ամբողջության մեջ ըստ Լ.Ս.Ներսեսյանի՝ մեծ հնարավորություն կտա երեխաներին ընկալել շրջապատող միջավայրի գեղեցկությունը և նրա դերը մարդու կյանքում, նրանց մեջ զարգացնելով կյանքի հուզական, նպատակաուղղված գեղագիտական ընկալում, ապահովելով արվեստի ազդեցությունը աշակերտների գաղափարական և բարոյական դաստիարակության վրա…» (10, էջ 61-70) :

Ն.Ա. Մակովսկին առանձնացրել է գիտությունների փոխներգործության առանձնահատկությունները, տեսակներն ու միջոցները, փոխներգործության մակարդակներն ու ձևերը, նշել փոխներգործության գործոնները: Ընդհանրացնելով հետազոտության արդյունքներն ու մոտեցումները՝ նա նշում է, որ գիտությունների փոխներգործության գործընթացը հասարակության՝ որպես ամբողջության, հասարակական գործունեության սուբյեկտի կայացման արտահայտություն է և առաջատար միտում է հանդիսանում ժամանակակից պայմաններում: Գիտությունների փոխներգործությունը նրա կողմից որոշարկվել է որպես ճանաչողական գործունեության կեցության միջոց, որը գիտության ոլորտում իրականացվում է ժամանակակից գիտական հետազոտության ձևավորվելիք համակարգի շրջանակներում:

Գիտությունների փոխներգործությունը չի բխեցվում ձևատեսությունների ճանաչողության միջոցների միայն մեկ փոխադարձ կապից: Որպես նրա էական տարր՝ հանդես է գալիս առանձին գիտություններին վերաբերող առարկաների փոխներգործություն: Այսպիսով, գիտությունների փոխներգործության դեպքում անհրաժեշտ է առանձնացնել հետաքրքրող առարկան, իսկ յուրաքանչյուր գիտության ներկայացուցիչները պետք է միմյանց հետ աշխատեն միևնույն առարկաներով: Հակառակ դեպքում փոխներգործությունը, այսինքն՝ մարդկային մտածողության ներթափանցումն արտաքին աշխարհի բազմազան երևույթների ու գործընթացների կապերի ու հարաբերությունների էության մեջ, չի ստացվի, իսկ այդպիսով անհնարին կլինի նպաստել բնության ու հասարակության նոր օրինաչափությունների զարգացման բացահայտմանը:

Վ.Ա. Սուխոմլինսկին կարծում է. «Ձեռք բերած համեմատական կենսափորձը, գիտելիքների պաշարը, մտածողության և հոգեկան մյուս հատկությունների առավել զարգացումը և այլ գործոններ միասնաբար

նպաստում են սովորողների հետաքրքրությունների ու զգացմունքների հետագա խորացմանը» (4; էջ 118) :

Վերլուծելով գիտական իմացությունների ներառականության պատմությունը՝ Ռ.Վ. Տուրչենկոն գիտական իմացության ներառականությունը որոշարկել է որպես գիտությունների փոխներգործության հստակ դրսևորումներից մեկը: Դարերի ընթացքում նրա դերը վերապահվել է փիլիսոփայությանը, որը Ռ. Դեկարտը, օրինակ, պատկերացնում էր ծառի ձևով, որը մետաֆիզիկական է (ուսմունք կեցության և ճանաչողության հիմունքի մասին), բունը՝ ֆիզիկան, և այդ բնից շարունակվող ճյուղերը՝ մնացած բոլոր գիտությունները: Այդպես էր որոշարկում գիտությունները նաև Ռ. Արնհեյմը: Նա նշում էր. «Գիտության զարգացումը հիշեցնում է ծառ, որի մեջ բնությունը և յուրաքանչյուր նոր ճյուղի գործառույթը պայմանավորված են ամբողջի հետ նրա հարաբերությամբ»: (1; էջ 89)

Անդրադառնալով ուսուցման՝ մեզ հետաքրքրող հիմնախնդրին, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Բ. Մ. Կեդրովի մտածողության ուղղությանը, ով հաստատում էր, որ գիտությունների ներառականություն ասելով պետք է հասկանալ նրանց փոխներգործության այնպիսի ձև, որը ենթադրում է ընդհանուր գիտահետազոտական առաջադրանքների ու նպատակների առկայության իմացություններ տարբեր ոլորտներում, ինչպես նաև այդ խնդիրների ու նպատակների լուծման և իրականացման համար անհրաժեշտ ճանաչողական միջոցների առանձնահատուկ միասնական համակարգ: Նա որոշարկել է գիտության մեջ ներառական գործընթացների տիպաբանությունը, որի օգնությամբ բացահայտում է բնական գիտությունների շարժման ընթացքը դրանց տարբերակումից դեպի փոխներթափանցում, մասնակիից՝ ընդհանուր, ճանաչողության ցածր աստիճանից՝ բարձր, առարկայի առանձնացված կողմերի ուսումնասիրությունից՝ դրանց ամբողջական դիտարկում: Ըստ մեզ՝ այն կարող է լինել միջառարկայական կապերի, այդ առարկաների փոխկապակցված գործընթացի, առավել ընդհանուր գիտության և նրանց առնչությունների գործընթաց:

Ուսուցման նոր, արդյունավետ տեխնոլոգիաների մշակման, ուսուցման արդյունավետության բարձրացման, կառավարման, ուսումնատեսական գործընթացների ծրագրավորման համար կարևոր է ուսումնական գործընթացի արդյունավետությունը որոշարկող գործոնների աստիճանակարգի հարցը: Աշխատանքի, ճանաչողական գործունեության, ուսումնասիրման առարկայի նկատմամբ հետաքրքրության առավել ազդեցիկ գործոններ են հանդիսանում հիմնավորումը՝ առարկայի նկատմամբ հետաքրքրությունը, ուսման նկատմամբ պահանջմունքը, սովորելու ունակությունը, աշխատունակությունը, ուսումնական գործունեության ծավալը, ուսուցման հաջորդականությունը, համակարգվածությունը, ուսման մեջ կենսունակությունը ու կայունությունը

գործնականում, հստակ առաջադրանքների ուսումնասիրման ընդունակությունը:

Որպես ուսուցման գործընթացի գլխավոր գործոն՝ կարելի է առանձնացնել հիմնավորումը, ուսման նկատմամբ հետաքրքրությունը, ուսման պահանջմունքը: Հիմնավորման գործոնի զարգացման համար կարևոր է հաշվի առնել նաև ընդհանուր ընդունակությունների գործոնները, որոնք ուսուցման գործընթացում դառնում են առավել արդյունավետ:

Ա.Օ. Թոփուզյանի կարծիքով. «Այսօր արդեն կրթադաստիարակչական գործընթացում երեխաների ակտիվ գործունեությունը դիտվում է որպես նրանց ընդունակությունների, կարողությունների, օժտվածության զարգացման, ձեռքբերումների ընդարձակման, ինքնադրսևորման և ինքիրացման անժխտելի պայման: Հենց այդ պատճառով էլ մանկավարժությունը պետք է անվերապահորեն հաշվի նստի այդ կանխադրույթի հետ և ձգտի, որ դպրոցը խթանի երեխայի միտքը, զարգացնի նրա դիտողականությունը, մտածելու և արտահայտվելու հակումները, օգտագործի երեխայի փորձը» (5, էջ179):

Նշված գործոններն առավել բնութագրական են ներառական ուսուցման գործընթացի համար, որը դիտարկվում է որպես մանկավարժական տեխնոլոգիա, որը ներառում է ուսուցման աստիճանակարգային բոլոր գործոնները, ինչպիսիք են՝ ուսուցման նպատակը, ուսուցման բովանդակությունը, ձևատեսությունները, ձևերն ու միջոցները:

Հ.Հ. Պետրոսյանի կարծիքով. «Ցանկացած կրթության նպատակ ուսումնառողների մոտ անձնային որակների և ուղղվածության համար անհրաժեշտ գիտելիքների ուսուցումն է, կարողությունների, հմտությունների, իրազեկությունների ձևավորումը, դրանց կիրառումը պրակտիկայում: Սակայն, քանի որ ուսումնական գործունեության ժամանակ իրականացվում են նպատակի այս բոլոր բաղադրիչները, ապա անհրաժեշտ է օգտագործել տարբեր մեթոդներ դրանց ամբողջության մեջ» (6, էջ 103) :

Ձևատեսության մեջ արտացոլվում են ուսուցման օբյեկտիվ օրինաչափությունները, նպատակները, սկզբունքներն ու ձևերը: Այսպես՝ ուսուցման ձևատեսությունն այնպիսի տրամաբանական հասկացություն է, որն ուղենշում է ճանաչողական գործունեության և մանկավարժի ու սովորողների համագործակցության կազմակերպումը:

Ձևատեսության, մանկավարժության սկզբունքների, մանկավարժական գործոնների գիտամանկավարժական որոշարկման այսպիսի մանրակրկիտ նկարագրությունները հետազոտության մեջ ներկայացված են արվեստի յուրացման գործընթացին ներառական մոտեցման մշակման հետ կապի մեջ: Մանկավարժական ներառական տեխնոլոգիան հումանիտար ու գեղարվեստական առարկաների բնագավառում բացահայտվել և ուսումնասիրվել է բնապահպանական-տարածաշրջանային մոտեցման,

հոգեբանական գործընթացների գործունեության դիրքերից, որոնք ուղղված են ճանաչողական և ինքնուրույն աշխատանքային գործունեության զարգացմանը, ինչի բարձրագույն չափանիշ է հանդիսանում երևակայության բազմակողմ գործունեության զարգացումը:

Ստեղծագործական այսօրինակ գործունեության ուղղվածությունը պայմանավորված է ստեղծագործողի անհատական դիրքով և աշխարհայացքով: Ստեղծագործության կերտման գործընթացում կարևոր դեր են խաղում երևակայությունն ու պատկերավոր մտածողությունը, որոնք հենվում են պատկերային արտահայտչական միջոցների, մշակութային ժառանգության, հուզագեղագիտական զարգացման մշակույթի, պատմական փորձի, մշակութային հիշողության, ուշադրության, դաստիարակության, զուգորդման կամընտրականության, ցանկության և այլ գործոնների վրա: Այս կերպ ստեղծագործողը միավորում, համադրում և վերափոխում է իր հիշողության մեջ գոյություն ունեցող ողջ տեղեկատվությունը:

Այս ամենը խթանում է երևակայության աշխատանքը, այսինքն՝ հնարավորություն է ընձեռում անհատին անմիջապես և ամբողջականորեն տեսնել, գործել, կառուցել սեփական գործունեությունը: Հետևաբար, ուսումնական գործունեությունը, այդ թվում և գեղարվեստականը, պետք է ընկալել որպես երևակայության և գեղարվեստական մտածողության համաստեղծագործություն: Քանի որ աշակերտի համար դժվար է ընդհանրացնել իր գիտելիքներն ու պատկերացումները, նրան օգնության է գալիս ուսուցիչը, ով ստանձնում է աշակերտի ստեղծագործական գործունեության նախապատրաստման գործընթացը՝ օգնելով նրան ուշադրությունը կենտրոնացնել անհրաժեշտ առարկայի վրա: Այսպիսով, ուսումնական գործունեությունը պետք է դիտարկել նաև որպես աշակերտի և ուսուցչի համաստեղծագործություն:

Այս ամենը ուսուցչից պահանջում է մասնագիտական խոր իմացություն և կազմակերպչական հմտություն: Ն.Բ. Կռիլովան գրում է. «Ոչ այնքան ուրիշի մեթոդներին տիրապետելն է վճռում հարցը, որքան սեփական ստեղծագործական գործունեության ընդունակությունը: Այդպիսի կրթական գործընթացներում շեշտը դրված է ոչ թէ աշակերտներին գիտելիք բացատրելու վրա, այլ նրանց հետաքրքրությունների զարգացման և այդ հիմքով անհատապես իմաստալից գիտելիքի ընդլայնման վրա: Հիմնական է դառնում ստեղծագործական շփումը (դասին և դասից դուրս), քանի որ հենց շփման ընթացքում է հնարավոր դառնում մշակութային հետաքրքրություններ զարգացնել» (7, էջ20):

Այս ուղղության զարգացման ընդհանուր գործընթացը մանկավարժական գիտության և փորձի պատմության մեջ իրականացվում է աստիճանաբար: Հետաքրքրություն է ներկայացնում մանկավարժական գիտության պատմական փորձը, որում նշված բոլոր ուղղություններն արտահայտված են այս կամ այն

ձևով, քանի որ նրանք բովանդակում են ներառականության համար կարևոր գործոններ՝ փոխներգործություն, համակարգված աշխատանք, աշխատանքի հետազոտական ձևեր:

Արվեստը, ծավալը, գաղափարները ձևավորվում են մեր իսկ միջավայրում, բազմաթիվ անհատների միատեղ գործունեության ընթացքում: Յուրաքանչյուր պատկերի, հայացքի կամ կերպարի պատմությունը ճաշակի և ընկալման, քաջալերանքի և հակազդեցության, անձնական ձգտումների պատմություն է:

Նշված հաշվառումը յուրատեսակ ելակետ է հանդիսանում յուրաքանչյուր երևույթի, գործունեության ցանկացած տեսակի, այդ թվում և ստեղծագործական գործունեության յուրացման համար: Հնարավոր չէ ճիշտ գնահատական տալ գեղարվեստական ստեղծագործությանը (գրականության, երաժշտության, քանդակագործության, ճարտարագիտության, գեղանկարչության, պարի, կինոյի կամ այլ ասպարեզի)՝ չճանաչելով հեղինակի անձը: Գեղարվեստական ստեղծագործության անաչառ բնութագրման համար նկարիչը պետք է պատկերացնի և արտացոլի այն դարաշրջանը, որում ստեղծագործում է, ճանաչում կամ իմանում կյանքի հասարակական պայմանները, բնակության վայրը, դասակարգային պատկանելությունը, անձնային և հոգեբանական որակները և այլն: Այս ամենը պատճառահետևանքային կապեր է ստեղծում և ընդգծում առանձին անհատին՝ որպես ստեղծագործողի, անձի, անհատականության:

Կ.Ա. Հելլերը հավատարիմ է մնում կարողության բազմագործոն ձևանմուշին, որն ընկալվում է որպես անհատական կոգնիտիվ դրդապատճառ և հասարակական ներուժ, թույլ է տալիս հասնելու բարձր արդյունքների տարբեր ոլորտներում, որոնցից մեկը ստեղծագործությունն է (8, էջ 62) :

Ցավոք, արվեստի ստեղծագործությունների ուսումնասիրման նկատմամբ նման վերաբերմունքը բնութագրական չդարձավ ոչ մի առանձին գիտության, առավել ևս՝ կրթության ոլորտի համար: Կրթության համակարգում, սկսած նախադպրոցական տարիքից մինչև բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու տարիքը, յուրաքանչյուր առանձին առարկա ուսումնասիրվում է մյուսներից առանձին, այդպես նաև արվեստագիտությունը՝ կերպարվեստի, երաժշտության, թատրոնի պատմությունը և այլն: Ահա թե ինչու ներառական դասավանդման իրավաչափությունը հիմնավորվում է հասարակական միջավայրով ինչպես գիտության, այնպես էլ արվեստի մեջ:

Փիլիսոփաները, արվեստաբանները դիտարկում են արվեստների փոխադարձ կապը տարածության մեջ: Հիմնվելով նշվածի վրա՝ հոդվածում արվեստի ուսուցման գլխավոր գործոն է դիտարկվում տարածության և տեսողականության միջավայրի գործոնը: Տարածությունը մի կողմից՝ դիտարկվում է որպես ստեղծագործության կառուցվածքի կազմակերպիչ է մյուս կողմից՝ արվեստի ստեղծագործություններն ապրում են որոշակիորեն

ստեղծված տարածության մեջ, և երրորդ՝ գեղարվեստական ստեղծագործության տարածությունն ամբողջապես կախված է նրանից, թե պատմական, բնական և առարկայական ինչ տարածության մեջ է ապրել ու ստեղծագործել նկարիչը: Այսպիսով, տարածությունն առանձնացված է՝ որպես տեղանքային և ժողովրդագրական միջավայր հենց նկարչի իրական կյանքում:

«Եթե դուք ինձ հարցնեք , թե ով է իմ մեջ այժմ ամենամեծ հետաքրքրություն առաջացնում, ապա ես կպատասխանեմ՝ արվեստագետն ինձ ավելի շատ է տալիս, քան ուզածդ գիտական մտածողը, ավելի շատ, քան Գաուսը» - գրում է Ն.Գ.Կազանկինան (9, էջ 8) :

Արվեստների փոխադարձ կապի գաղափարը կիսող յուրաքանչյուր հետազոտող առանձնացնում է իր գործոնները, իր միավորող պայմաններն ու առանձնահատկությունները: Այսպիսով, արվեստի ներառական գործոնի բնութագրման մեջ Լ.Ս. Ներսիսյանը տարածությանը միավորող դեր է վերագրել բոլոր արվեստներին: Այս դիտակետից մենք կանգ ենք առնում արվեստների համադրության հասկացողության վրա: Գեղարվեստական ստեղծագործությունն ապրում է և պահանջում առանձնահատուկ պայմաններ իր կյանքի ու երկարակյացության համար: Արվեստի կենսունակությունը կախված է տպավորությունների արտահայտման միջոցների միավորվածության աստիճանից (10, էջ 6-11) :

Մյուս հետազոտողներն առանձնանում են ընդհանուր արվեստում, օրինակ՝ ոճի միջոցով: Ոճի որոշարկման մեջ հետաքրքրություն է ներկայացնում այն գաղափարը, որը ոճը դիտարկում է որպես որոշակի դարաշրջանների գեղարվեստական միատարր ընկալումների կուտակման արդյունք, որովհետև ոճի և բովանդակության համաձայնեցման մեջ ընկած է իսկական գեղարվեստականության, ժամանակի արվեստի իսկության գրավականը:

Արվեստի յուրաքանչյուր բաժին կատարելության է հասցվել ամենաբարձրակարգ նկարիչների կողմից, և բոլոր այդ բաժինները ենթակայական կապի, գեղեցիկի հարաբերակցության են հասցվել մեկ ընդհանուր փոխադարձ միասնության մեջ:

Այսպիսով, բոլոր արվեստները միավորող սկիզբը բացահայտվում է ինտոնացիայի մեջ՝ բնութագրելով այն որպես «մշակույթի հիմնակազմիչ երևույթ»: Ըստ էության՝ ինտոնացիոն են բոլոր արվեստները: Տարբեր արվեստների ինտոնացիան, տվյալ արվեստի նյութին համապատասխան, մոտեցնում է միջոցների համալիրության սկզբունքը, նրանց բովանդակության պատմական բազմաշերտությունը, ինտոնացիոն, կերպարվեստային կենսական փորձի հետ կապը, ֆիզիկական հակազդեցություններին անտեսանելի կապվածությունը, որոնք միաձուլվում են աշխարհայացության էներգիայի հունի միասնության մեջ: Արվեստներից յուրաքանչյուրի մեջ նկարիչները վկայություն են թողել բոլոր արվեստների էներգոինտոնացիոն հասկացության մասին: Բառը ստեղծված է որոշակի և ընդհանուր հասկացությունների և մտավոր

պատկերացումների ընկալողական գործունեության արդյունքների ամրագրման, պատկերը՝ զգայական բնության կերպարներին հասնելու համար: Իսկ ինտոնացիան իմաստային էներգիայի ուղղակի մարմնավորումն է: Պատկերն արդեն մեծ դժվարությամբ է առանձնանում ինտոնացիայից, քանի որ այն ստեղծող գծերն ու գույները մասամբ են միայն պատկերային, մասամբ էլ՝ անմիջականորեն էներգիա պարունակող:

Արվեստների փոխներգործության մասին դատողությունները լիարժեք կլինեն, եթե մենք այդ երևույթն ընկալենք որպես զգացմունքների և իմաստների հնարավոր ընդլայնման գործընթաց:

Արվեստի տարբեր ձևերի համադրումը հիմնվում է որոշակի քանակական գնահատականների վրա, որոնք ընդհանուր են զգայական ընկալման բոլոր միջոցների, ավելի լայն իմաստով՝ գեղագիտական փորձի բոլոր տեսակների համար: Ճանաչողական գործառույթն առանձնացվում է՝ որպես բոլոր արվեստների հիմնական գործառույթներից մեկը՝ հաստատելով, որ բոլոր իմացությունները, որոնք մարդը վերցնում է շրջապատող իրականությունից, յուրացվում են զգայական օրգանների միջոցով, որոնք և ի հայտ են գալիս տեսողության, լսողության կամ շոշափելիքի շնորհիվ: Արվեստի ստեղծագործությունը նկարչի ընկալման մեջ ստեղծված առարկայի մաքուր, չափազանցված և արտահայտչականացված արտապատկերումն է:

Գրականություն

1. **Арнхайм Р**., Визуальное мышление, Душанбе, 1972, 412 с.
2. **Давыдов В. В.** «Генезис и развитие личности в детском возрасте», «Вопросы психологии», № 1, 1992. С. 22—33.
3. **Краснояров К. П.**, Методические принципы коллективных научных исследований и их роль в интеграции науки, М., 1994, 46с.
4. **Սուխոմլինսկի Վ.Ա.,** Դաստիարակության մասին (կազմող Ա.Սոլավեյչիկ), Երևան, «Լույս» հրատ., 1976, 336 էջ:
5. **Թոփուզյան Ա.Օ.**, Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ, Երևան, «ԼԻՆԳՎԱ» հրատ., 2009, 296 էջ:
6. **Պետրոսյան Հ.Հ.**, Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները, մոդուլային ուսումնական ձեռնարկ, Երևան, ԱՆ-ՋՈՆ հրատ., 2008, 316 էջ:
7. **Крылова Н.Б**., «Как мы можем изменить культурные ценности образования (Народ. Образован.)», 1998, н.9, 16-21 с.
8. **Heller, Kurt A**. (1993): Identifying and Counseling the Gifted Students. In: Demetropoulos, E. G.Hrsg.): Europe 2000, Tendencies and Perspectives in Counseling and Guidance. International

Conference Proceedings. Athens: Hellenic Society of Counseling and Guidance. pp. 48-62.
9. **Казанкина Н.Г.**, Воспитание гуманизма творчеством. М., /магистр./ Н.2, с. 7-13.
10. **Ներսիսյան Լ.Ս.**, Կերպարվեստ, Ե., 1997:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, հ.գ.թ. Վ.Բ.Յարամիշյանը: